


Ապահով

Հիմնադրված է 1991 թվականին: 16 (500) դեկտեմբեր 17-31, 2021թ.



ԵՐԿԾԱԲԱՌԱ ԵՐԿԾԱԲԱՌԱ ԵՐԿԾԱԲԱՌԱ ԵՐԿԾԱԲԱՌԱ

Եթե իսպառ մենք հանենք փոքրոգություն մեր սրտեւ

Ամփոփում ենք 2021 թվականը. անցյալ տարում հայ ժողովրդի համար շարունակվեց 2020թ. աղետալի պարտությունը: 2021թ. պարտվեցինք դիվանագիտական ճակատում, որը ռազմաճակատում կրած պարտության հետևությունն եր: Աղբեցանն ու Թուրքիան օրեցօր ամրապնդում են իրենց հայթանակը դիվանագիտական ճակատում: Իսկ պարտությանը զուգահեռ շարունակվում է հայ ժողովրդի ազգային արժանապատվության ուժնահարումը: Այս ամենը տեղի է ունենում այն պայմաններում, եթե հայկական պետությունը ներկայացնող անձը դարձել է Արցախում անցած դարում բնակվող աղբեցանցիների շահերի պաշտպանը՝ անտեսելով իր ազգային շահն ու արժանապատվությունը:

Առկա իրավիճակում թեւակոխում ենք 2022թ.: Հայ ժողովրդի ապրած ցավն ու վիշտը չի ամոքվում: Հայրենազգիկանն ու մի ամբողջ սերնդի կորստին ավելանում է պայքարի անընդունակության եւ պատիվն ու արժանապատվությունը չհարգող ազգի պատկերը: Միշազգային բեմահարթակում հայը այդպես է ներկայացվում հանրությանը: Այս վիճակից պետք է դուրս գալ, եւ դուրս գալու միակ միջոցը պայքարն է, պայքար՝ հոսանքավորման մեջաւահանական համար:

Ստորացած վիճակում ապրելը խոցված արժանապատվության վերը ավելի է խորացնում։ Հաղորութն ու Ծուշին հայ ժողովրդի արժանապատվության վրա դաշված խարանների շարքը համարլեցին։ Ոչ միայն Հաղորութը, Ծուշին ու Հահումյանը, այլև բռնագրավված հայրենիք Արեւմտյան Հայաստանն ու Զավախիք հայկական են ու հայկական էլ կմնան։ Այս է պայքարի ուղին՝ հանուն ազգի ազատագրման եւ իրավունքների վերականգնման։ Հարատեւելու, զարգանալու եւ մարդկային քաղաքակրթության մեջ հայի արժանապատիվ տեղն ապահովելու համար մտացածին խաղաղություններն ու բարիդրացիությունները խաբուսիկ ապարանքներ են միայն։

ՀՅ Դաշնակցությունը հայ ժողովրդի արժանապատվության պահպանության գործում միշտ եղել է առաջին դիրքերում: Ինչպես ՀՅԴ 131-ամյակի առթիվ նշել է ՀՅԴ Բյուրոյի նախակին ներկայացուցիչ, «Կամավորական շարժում» ՀԿ նախագահ Դրանտ Մարգարյանը, «ՀՅԴ-ի կյանքի մեջ ամենակարեւոր հայրենիքն է ու Արցախը, ոչ թե հանուն իշխանության պայքարը: Մենք իրավունք չունենք ընկճպելու, համակերպվելու ստեղծված իրավիճակի հետ: Աղբբեշանք պետք է հասկանա, որ հանգիստ չի ունենա, չի վայելելու մեր Շուշին ու Դաղրութը: Մեր պայքարը նոր է ակավում: Աշխարհը պետք է հասկանա, որ հայ ժողովրդը է կապիտույսացիային, դեմ է իր տարածքների բռնազգավրմանը: Ոչինչ չի վերջացել, այլ միայն սկիզբ է առել: Անհրաժեշտ է չեղարկված հայտարարել նոյեմբերի 9-ի կապիտույսացիան. ազգային նոր Զարթօնը է հարկավոր»: Թող այս ուղերձը միևնույն 2022թ. մեր ապահով ուղեառութ:

Եվ ինչպես Ռ. Պատկանյանն է իր Նոր տարվա մաղթանքների մեջ նշում, բոլոր երանելի մաղթանքները միայն այն ժամանակ կիրականանան, «եթե իսպառ մենք հանենք փոքրոգություն մեր սրտեն»: Ըստրհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:



ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը՝ Հայաստան-Թուրքիա
հարաբերությունների եւ Արցախի հիմնախնդրի կարգավորման
գործութացների վերաբերյալ

Յայ Յեղափոխական Դաշնակցությունը պարբերաբար նախանշել է այս Մարտահրավերները, որոնք կապված են Յայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի հետ՝ հատկապես Յայաստանի գործող իշխանությունների մասնակցությամբ:

Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ պաշտոնական Ասկարան ոչ միայն չի հրաժարվել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման իր հայտներեք նախապայմաններից (Հայաստանի կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը ստարտից հրաժարում, Արցախի Եւթակայությունն Ադրբեյջանին Եւ Հայաստան-Թուրքիա առկա միջպետական փաստացի սահմանի իրավական ամրագրում), այլև ավելացրել Եզրորդը՝ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» տրամադրում։ Ազելին, Թուրքիայի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հայտարարությունները՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն Ադրբեյջանի հետ համադրելու վերաբերյալ, փաստում են, որ խոսքը ոչ թե գտնում է Հայաստան-Թուրքիա միջպետական բանակցությունների, այլ թշնամական տանդեմի կողմից Հայաստանի հարկադրվող նոր անձնագրության վայրին։

Նախատան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման այս գործընթացն ի սկզբանե անառողջ է եւ իսկստվուագավոր: Դա արվում է Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված միջազգային քաղաքական եւ անկտանգային մի իրավիճակում, երբ երկիրը պարտության տարած օրվա իշխանությունը օբյեկտիվ եւ սուրյեկտիվ պատճառներով զուրկ է հայության կենսական շահերուայցունավետ պաշտպանելու կարողականությունից:

Ակնհայտ է, որ ներկա պայմաններում Յայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը հղի է աշխարհաքաղաքական, անվտանգային, քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր-մշակութային բազմաթիվ մարտահրավերներով եւ անխուսափելիորեն կիանգեցնի անշրջելի Վտանգավոր հետեւանքների ու ինքնիշխանության կորստի:

Առկա մտահոգություններն ավելի են խորանում ՀՀ իշխանությունների անպատճախանատու քաղաքական վարքի եւ հաշվետվողականության իսպառ բացակայութան ապամաններում:

Հայաստանի կողմից հատուկ բանագլածի ընտրությունն է հուշում ե այն մասին, որ հայկական կողմն ըստ Եռլիքան մասնակցում է արդեն իսկ կանխորոշված մի գործնթացի, որի հարապիրինս հայակաստ վերջնարդյունքի ապահովման համար պրոֆեսիոնալ դիվանագետի

Այս պայմաններում ՀՅԴ Բյուրոն ՀՅ իշխանություններից պահանջում է.

1. ԱԱԱՀՅԱՎԵՆ ՔՈՂԱԳԵՐԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՌՈՒՐԺԻԱ հարաբերությունների կարգավորման գործընթացի ուղենիշներ

2. Անվանապես եւ ամբողջությամբ մերժել թուրքական սահմապայմանները.

3. ღղղաքական շեշտադրում անել առ այս, որ Հայաստան-Թուրքիա միջանական հարաբերությունների կարգավորումը կապացված չի կարող լինել որեւէ երրորդ լորու հետ:

Կողման հետ:

Հարվ էնք համարում հատուկ ընդգծել, որ Հայաստան-
Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործըն-
թացում անառաջնային պետք է հաշվի առնվի ՀՀ Սահ-
մանադրական դատարանի՝ Ցյուրիխյան արձանագրու-
թյունների սահմանադրականության հարցի վերաբերյալ
2010 թ. հունվարի 12-ի որոշումը. ՀՀ-ի բոլոր քայլերը
պետք է ներդաշնակ լինեն սույն որոշման մեջ ներկայաց-
ված իրավական դիրքորոշումներին եւ Հայաստանի Հան-
րապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմա-
նադրական կառահ հիմնառար սկզբունքներին:

Յայստան-Ծովորի հարաբերությունների կարգավորումը եւ Մեր ժողովրդի իրավունքների կանխորոշումը ոչ մի իշխանության մենաշնորհը չէ: Յայ-Ծուրքական հարաբերությունները կարող են կարգավորվել Միայն աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախոհությամբ, առանց թուրքական և ախաճայմանների եւ մեր սերունդների իրավունքների ուլասապահուման:

Հետեւաբար պետք է պատրաստ լինել համահայկական ընդունված եթե ՀՅ իշխանությունները փորձ անեն հայ ժողովրդի իրավունքների ուժնահարման ներկա դիրքորոշմամբ զարգացնել հայ-թուրքական՝ թշնամու կողմից պարագանական օրականություն:

Չենք կարող չանդրադառնալ և անհաջողակի լինել պարզապես այս գործությունը գրանցված է պարբերաբար հնչեցվող եւ վերջեն առավել եւս ինքնախոսութվանված իշխան վտանգավոր, իրականությունը խեղաթյուրող եւ հայկական շահերը ոտահարող դիրքորոշումներին, ինչը կասկածի տակ է դնում Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ միջազգային ճանաչման հասե-

լու լեզիտիմ իրավունքը:

Վերահաստատում ենք, որ ՀՀ գործող իշխանությունների կողմից գրապիր եւ բանափոր որեւէ համաձայնություն, որը կախատի Արցախի Հանրապետության վերաբերյալ իրավական իշխանարա նորմերը եւ կամ հարցականի տակ կդիմ Թորքիայից հայ ժողովորդի եւ Հայաստանի Հանրապետության հատուցումների պահանջների իրավականությունը և մասնաւությունը:

ՀՅԴ Բյուլղ
27 դեկտեմբերի 2021 թ.

18 կողմ, 11 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունվել է 2022թ. բյուջեի նախագիծը

Նեկտեմբերի 23-ին կայացած ԱՀ Ազգային ժողովի նիստի օրակարգում ընդգրկված էին «ԱՀ 2022 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը, «Ոստիկանության գործերի մասին» օրենքների նախագծերի փաթեթը /երկրորդ ընթերցում/, «Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն

Վերսկսվել են գալիք տարվա բյուջեի քննարկումները:

Բյուջեի նախագծի վերաբերյալ Աժ խմբակցությունների եւ պատգամավորների կողմից Ներկայացվել է 101 առաջարկ: Այս մասին իր Ելույթում ասել է ԱՀ ֆինանսների նախարար Կահրամ Բաղդասարյանը՝ Նրա խոսքով՝ ստացված առաջարկությունների վերաբերյալ կառավարության հայտնած տեսակետներն ամփոփաթերթիկների տեսքով ներկայացվել են Աժ: Միաժամանակ ներկայացվել է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի լրամշակված տարբերակը, որը ներառում է պատգամավորների կողմից արված այլ

առաջարկությունները, որոնց վերաբերյալ կառավարության կողմից տրվել է դրական եզրակացություն: Ըստ դրանց՝ պետական բյուջեի դեֆիցիտն ավելացվել է 1 մլրդ 118,8 մլն դրամով:

«2022թ. պետական բյուջեի լրամշակված նախագծի համաձայն՝ պետական բյուջեի վերջնական ցուցանիշները կազմում են՝ եկամուտների մասով՝ 184 մլրդ 300 մլն դրամ, որից միշտետական վարկի տեսքով՝ 144 մլրդ դրամ, սեփական եկամուտները՝ 44,3 մլրդ դրամ, ծախսերի մասով՝ 215 մլրդ 781,1 մլն դրամ: Դեֆիցիտը կազմում է 31 մլրդ 481,1 մլն դրամ», - ասել է Վ. Բաղդասարյանը:

→ 4

ԱԺ պատգամավորների ելույթները արտահերթ նստաշրջանում

← ՍԵՆՔ պետք է արձանագրենք, որ մեր սուրբ-յեկտայնությունն արտահայտող երկու պետական օլակներ, մարմիններ ունենք՝ նախագահական ինստիտուտը եւ Ազգային ժողովը՝ առաջնային մանդատ ստացած երկու մարմիններ, որոնց նկատմամբ նույնականացրած շարունակվում է դեռևս 2018թ. սկսված կազմաքանդման գործընթացը։ Ես պատահական չեմ ասում դրանց մասին, եւ յուրաքանչյուրիս խոսքը հենց նաեւ հակադրում է, յուրաքանչյուրիս խոսքը այն դիմադրությունն է, որը պետք է խոչընդոտի կազմաքանդման գործընթացը։ Մենք հիմա ունենք կիսաքանդված, կիսաանկենդան, քաղաքական գործընթացներից գրեթե դուրս, ցածր իմունիտետով այդ երկու օլակները։ Թողինձն ներեն իմ գործընկերները, նախագահական ինստիտուտի ներկայացուցիչները, բայց սա է իրականու-



Թյունը: Պետական այդ երկու կարեւոր օղակները մեր ժողովորի ազատ կամարտահայտությամբ ծեւափոր-ված մարմիններ են: Երկուսի թևականոն, ավելի ակ-տիկ քաղաքական գործունեությունից է կախված մեր ապագան: Որքանո՞վ մենք կկարողանանք այդ ակտի-վությունը ցուցաբերել:

3 տարի շարունակում է կազմաքանդման գործընթացը: Օրինակսեր կարող եմ բերել հիշեք Նախապատրիազմյան շրջանում Յայստափակի Յանրապետության տարբեր օղակներում «Արցախի մարզպետ» անվանումը, Արցախի Յանրապետությունը միտումնավորությունը թողնելը: Հիշեք 2019թ. օգոստոսի 15-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հայտնի հանրահավաքի ժամանակ հասարակության տարբեր շերտերի ակտիվ «գործողությունները՝ ուղղված գործող իշխանությունների դեմ, 2018-ի հունիս-հուլիսյան դեպքերը եւ այլն:

Հետպատերազմյան շրջանում այս գործընթացը շարունակվել է: Յայատանի եւ Կրօպահի միջեւ քաղաքական հարաբերություններ չկան: Յայատանը մեր անվտանգության երաշխավորն է, անվտանգության ինչպիսի բաղադրիչ ունենք: Մենք առաջարկել ենք երկու ինստիտուտների՝ ՀՀ Եւ ԱՌ Ազգային ժողովների միջեւ հարաբերություններ հաստատել, որոնք չկան: Սրա մասին գուցե իմաստ չունի այսպես հրապարակային խոսել, բայց մենք պարտավոր ենք ասել՝ դանակը ուկորը հատել-անցնում է: Ոյժմ նովյանիսկ չունենք «Յայատան» համահյակական հիմնադրամի ընձեռած այդ կարեւոր տնտեսական կամ ենոթական քաղադրիչը: Իսկ մենք լուր հանգիստ հետևում ենք: ԱՌ նախագահի եւ ՀՀ վարչապետի միջեւ միայն կան հարաբերություններ՝ պահպանական ուղղութանական հաստիք պահպ

տեղման քաղաքականություն։ Ես այս գործընթացը բնութագրել եմ որպես դեիստեզրում։ 30 տարի մենք ՀՀ հետ ինտեգրվել ենք, իիմա դեիստեզրման գործընթաց է ընթանում։ Իսկ հետո կիևի ռեիստեզրում Արքայի Յանուարապետության հետ։ Դուք ուն ուզում եք ընկալեք, բայց սա է իրականությունը։ Սա քաղաքականություն է։ Մենք պարտավոր ենք դա հասկանալ, կանխորոշել եւ ապագա քայլերը կատարել։ Արդյո՞ք մենք ուս ասում ենք։ Ես կասիթ՝ ոչ։

Հայաստանի Հանրապետության առաջին դեմքը «Ճեղքերով լվանում» կրցախից եւ ասում՝ Ես մանդատ չեմ ստացել: Ողջունելով Մեր և ախազահի երեկվա ֆեյսբուքյան գրառումը՝ պիտի ասել՝ թո՞ւյլ ենք տալիս Հայաստանին «Ճեղքերով լվանալու»: Ո՞չ՝ ՅՇ-Ն մեր անվանագության երաշխավորն էր՝ իր ստանձնած պարտավորություններով: Խսկ ո՞վ պիտի մեզ ներկայացնի միջազգային հարթակներում: ՉԵ՞ որ 30 տարվա ընթացքում միջազգային հարթակներում մեր շահերը ներկայացնող օղակ կա՞ ի դեմս ՅՇ-ի: ՅՇմա ո՞վ պիտի ներկայացնի: Մենք չունենք այդ հնարավորությունը եւ համապատասխան կարելի հությունը: Յայտարարութանը կղոյմ քետարկելը բավական չէ, այս նվազգույնը է, բայց նաեւ ուզում եմ առաջարկներ ներկայանել:

Ծողովպրդի հետ խոսակից չկա: Տարբեր խմբերի քածանվելով՝ ծողովպրդի հետ բոլորս Միասին խոսելու հևարավորություն ստեղծենք: Երկրորդ՝ պատվիրակություններ կազմել դեպի կարեւոր կենտրոններ՝ անկախ Նրանից ընդունո՞ւմ են մեզ, թե՞ չեն ընդունում: Առաջին հերթին պետք է պատվիրակություն ուղարկել ՀՀ՝ վարչապետի, Ազգային ժողովի հետ հանդիպելու, այսուհետեւ համասնախազահող երեք երկրներ՝ Մոսկվա, Փարիզ-Բրյուսել եւ Վաշինգտոն, ինչու չե՛ նաւելու հարեւան իրան: Պատվիրակությունները պետք են կազմված լինեն լեզվակի ընտրված մարմիններից:

Սեզնից յուրաքանչյուրը շատ է դիմել հրեական համակենտրոնացման ճամբարների ընդիանուր գոյնության, գործունեության մասին Փիլմեր։ Շատ կարեւոր եւ դիպով քննութագործյուն է տպել իմ լավ ընկերներից մեկը։ Ասում Ե' դուք բաց համակենտրոնացման ճամբարի կարգավիճակում եք. անձնագիր եք ցույց տալիս, մտնում, դուքս գալիս ցույց եք տալիս։ Յամակենտրոնացման ճամբարների այդ Փիլմերը մեզ համար ուղենիշ թող լինեն։ Վերջապես այդ Փիլմերը ստեղծում են նաև գործեւու համար։

Արցախի կարգավիճակի հարցն օրակարգից դուրս թռինելը բարդացելու է իրավիճակը. Մետաքսէ Հակոբյան

«Յավով պետք է Նշենք, որ մայր Յայաստանի նորագույն պատմության մեջ Եղել են ապազգային ուժեր, որոնք տարիներ շարունակ եւ մինչ այժմ սպասարկում են օտարի, իսկ Երբեմն՝ թշնամու շահերը։ Այդ ուժերին Ներկայացնուցիչներից որոշենք հոգին փառավորվում եր, եթե 2018թ. մարտի մեկի դեպքերի ժամանակ տեսնում են, թե ինչպես են հայերը ծեծում, սպասում հայերին։ Այդ ուժերի Ներկայացնուցիչները ցիսիկաբար հայտարարում են, որ 2018. իշխանազավորման ավելի կարեւոր է, քան Արցախյան գոյամարտը։ Իսկ այսօր արդեն շրջանառության մեջ է դրվում այն ազգակործան մանկապույացիան, թե Արցախը հայկական չէ, թե Արցախում և անհինում ապրող աղորենցանցիները ինքնորոշման իրավունք ունեն։

Փաստորեն, երբ 2018թ. մենք հայտարարում ենք, որ այս վարչախումը եկել է Արցախը հանձնելու, մենք, մեղմ ասած, թերագնահատում ենք այս ուժերի ախորժակը: Ո՞՛: Արանք եկել են ողջ Հայաստանը՝ Արցախը Ներառյալ, հայ ժողովրդին եւ հայկական շահերն ու պահանջները հանձնելու, Հայկական հարցը փակելու եւ Հայոց պետականությունը հնարավորինս

արագ վերացնելու: Եվ դա կշարունակվի այսքան ժամանակ, մինչեւ հայ ազգը չի սթափվի եւ չի կանգնեցնի այս արհավիրքը: Սա նրանց պլան-մաքսիմումն է, մի- սկմումն արդեն կատարվել է:

Օրոշ հասցված վնասներն արդեն անուղղելի են, դաժան ու անդառնալի: Այս ազգակործան իշխանություններն առանց Վարանելու հրահրեցին պատերազմ եւ դրա արդյունքում մենք կորցրինք մեր հազարավոր քաջորդիներին: Պատմությունը ինչպես էլ փոխվի, ինչ էլ լինի, սա մեր միակ անդառնալի ու ամենացավոտ կորուստն է լինելու, որովհետեւ մեր զավակներին մենք այլեւս չենք կարող վերադարձնել, իսկ նրանք պիտի ապրեին, արարեին ու շենացնեին հայրենիքը: Այս ուժերի դեմ պայքարելը բարդ ու ծանր է, բայց մենք այլ ելք չունենք, քան այս ապազգային տարրերի դեմ պայքարելն ու նրանցից շուտափույթ ազատվելը: Այլընտրանքը կործանումն է: Եվ ժամանակն աշխատում է մեր դեմ: Իհարկե, ողջունելի է այս հայտարարությունը, բայց ես ուզում եմ համոզված լինել, որ ձեզնից յուրաքանչյուրն իր մտքում ուսի իր հայտարարության տեքստը՝ ավելի կոշտ, ինչու չէ նաեւ կոպիտ ձեւակերպումներով:

Արցախի ճակատագրի որոշողը ողջ հայությունը է՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք: Իսկ հայությունը արդեն որոշել է. դեռ 30 տարի առաջ Արցախն ինքնորոշվել է: Այսօր կայացած հանրապետությունը է իր պետական ինստիտուտներով: Դրա համար մենք ամենաթանկ գիևն ենք Վճարել եւ ամրագրել ենք մեր զավակների, հայրերի ու եղբայրների արյամբ, մեր գրկանքներով եւ տառապանքով:

Աղօանը երեք չի կարող լինել Աղրբեշանի կազմում, եւ հայը չի խուսափելու այդ որոշումը պաշտպանելու առաքելությունից, քանզի այսօրվա կեղծ բարե-



Կյանք: Յետեւաբար, բոլորը, նոյնիսկ գերտերությունները, սթափ մտածելու դեպքում պետք է հասկանան, որ ամեն կերպ անտեսելով եւ օրակարգից դուսու թողնելով Արցախի կառագավիճակի հաղոր, ավելի են բարդացնելու եւ սրբլու իրավիճակը: 30 տարի շարունակ Յայաստանի Յանրապետության իշխանությունները, անկախ իրենց ունեցած տեսակետից, պաշտպանել են այս որոշումը եւ ներկայացրել միջազգային բոլոր հարթակներում ու դիվանագիտական գործընթացներում: Իսկ Նիկոլ Փաշինյանը, զավթելով իշխանությունը եւ հայտնվելով իշխանության ղեկին, իրականացնում է ճիշտ հակառակը եւ պաշտպանում Է Աղրբեշանի ժողովրդի շահերը: Դա պատմական սխալ է, որը հայ ազգը պետք է շտապ շտկի, քանզի չի կարող լինել որեւէ հայկական իշխանություն, որը չպաշտպանի Արցախի եւ անտեղ ընակնո հաւելի իրավունքներո:

Եվ վերջում ամենակարենը՝ հայր Երեք չպետք է մոռանա՝ չկա Հայաստան առանց Արցախի, եւ չկա Արցախ առանց Հայաստանի»:

Ամանորը՝ սահմանամերձ գյուղերում

Ինչպես են Նոր տարին նշելու թշնամու դիրքերից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող գյուղերում, ինչպիսին է կրակոցների ճայների տակ դաս անող աշակերտների տրամադրվածությունը, ինչ ակնկալիքներ կան գալիք տարրոց: Այս հարցերի մասին «Ապահով»-ը գրուցել է մի շարք գյուղերի տևորենների, ուսուցիչների, գյուղապետների հետ:

Կարմիր շուկայի միջանկարդ դպրոցի տևորեն Շավեն Բարձասյան

Դպրոցը 221 աշակերտ ունի, որից 13 հոգի տեղահանած են Թաղավարություն, Հաղորդական շրջանի Ակնարդուր,



Խօսքերդ գյուղերից:

Այս տարին տարբերվում է նախորդներից: Նոր տարվա հետ կապված՝ մասնակից մոտ նոյն ուրախությունը, ոգեւորությունը կա, ուսուցչական կոլեկտիվի մոտ բացակայում է: Եթե խնդիրներ են ի հայտ գալիս, ուսուցչի շնչելու աշակերտների հետ հատուկ հոգեբաններ են աշխատում: Տարբեր կազմակերպությունների այցերը, նվերները նպաստում են, որ նախատուական տրամադրություն հաղորդվի աշակերտներին: Յուս, հավատ ունեմ, որ լավ է լինելու. այլ տարբերակ չկա: Եթե այսքան զիեր ենք տպել, իմաս այստեղ ենք, ուրեմն ուրիշ տարբերակ չկա: Պետք լինի ելի անցած սիսամերն ուղղելով պիտի պայքարենք: Այս անզամ չի պահանջանակ այս թերություններում վերացնենք, գործին ավելի խելոց մոտենանք, որ արդյունքն այսպես չլինի: Միանշանակ է, որ հոդին պիտի կառաջած մասն, մեր ապագան կերտենք: Եթե այսպես չլինի այս դպրոցը, աշխատելը անհմասն է դառնում: Յիմա միայն այդ նպատակի համար պիտի պայքարենք:

Յիմա կարելի է ասել՝ նպագագույն է արվում: Սեր ուղեղներում պետք է փոփոխություն մտցնենք, ամեն մարդ իր գործը պետք է նորմալ կատարի: Ղեկավարությունից սկսած՝ մինչեւ շարքային քաղաքացի, եթե իր պարտականություններու նորմալ կատարի, կիասնենք մեր նպատակին: Ազգային գաղափարախոսության վրա պետք է ուշադրություն դարձվի, որ մարդկանց մոտ հուսահատություն, պառակտում չլինի: Եթե սա ուշադրության կենտրոնում պահեն, ապահովեն միասնականությունը, մասցած խելոց դեկավարի հարց է: Ազգային հայությունը եմ ցանկանում, թող բոլորի օշախներում տոն լինի: Կցանկանայի, որ այս վատ օրերը չկրկնվեն: Դիմի պատրաստ լինենք, ուժեղ լինենք, որպեսզի միջոցառումն իր նպատակին հրաժարական լինի:

Կիչանի եւ Ղազանչի Կարեն Առաքելյան անվան միջնակարգ դպրոցի տևորեն Զորայր Աբրահամյան



Այս Նոր տարին ամեն տարվա նման չի լինելու: 2020 թվականից հետո ամեն ինչ փոխվել է: Ոչ աշակերտների, ոչ ծնողների շրջանում չկա նախկին իանդավառությունը: Մենք ամեն կերպ փորձում ենք ներգործել այդ խնդիրներ, փոխել երեխաների տրամադրությունը, ուրախությունը հաղորդել: Դպրոցում հայտարարված էր ամանորյա կահավորանք մրցույթ. որոշ դասարաններում արդեն աշխատանքներուն սկսված են, որոշ շերում ավարտին են հասցել:

Չեմ կարող ասել գյուղի կամ առանձին ընտանիքների

մասին, բայց, ենելով իրավիճակից, բոլորի տրամադրությունը էլ նույն է: Այնուամենայնիվ, պարտավոր ենք ինչոր ոչ ճենով գոնե երեխաներին ուրախացնելու, նրանց զին չկոտրելու համար տոն ու ուրախություն փոխանցելու:

Մաճկալաշեն համայնքի դեկավար Լեռնիկ Ավանեսյան

Մինչեւ պատերազմը նորմալ ենք նշել տոնական օրեր, երկու տարի է՝ չենք նշում: Երեխաները մեղավոր չեն, նրանք չափություն իրենց ուրախություններից: Նախատեսել ենք թեթեւ միջոցառում կազմակերպել երեխա-



ների համար, մուլտիերուսներ հրավիրել:

Իհարկե, առաջին նման չէ, բայց ժամանակը վերը բուժում է, մարդիկ կամաց-կամաց հոլիս մեջ են մտնում: Կրակոցներ պարբերաբար լսվում են: Խաղաղապահների ներկայությամբ ենք գյուղատնտեսական աշխատանքներ կատարում:

Մաղթաքը է, որ խաղաղություն լինի, մեր ժողովուրդ խաղաղ պայմաններում արարի, ստեղծի, ապրի:

Նախիջեւանիկի միջնակարգ դպրոցի տևորեն Գալինա Մեժլիմյան

Իրավիճակով պայմանավորված՝ տրամադրությունների փոփոխություն կա: Ինքան էլ ցանկանանք սրտանց ուրախանալ, այլ տրտմությունը, թախիծը մեր հոգու մեջ է: Մենք ցանկության դեպքում էլ չենք կարող սրտանց ուրախանալ, բայց որպեսզի հուսարժության տրամադրությունը երեխաների մեջ չափ, որպեսզի զգան, որ կյանքը շարունակվում է, որպեսզի զգան, որ մենք ապրելով պիտի հաղթենք թշնամուն, նրանց համար այդ տրամադրությունը կաշխատենք ստեղծել: Ամեն ինչ կանենք, բայց

Երեխաները պետք է զգան, որ պիտի ապրեն ոչ միայն իրենց, այլ նաև նրանց փոխարժեն, ովքեր չապրեցին: Գիտացնեն, որ իրենց հայրերը, երեալյները գրիվեցին նրա համար, որ իրենք կյանքը լիարժեք ապրեն: Դրա համար կաշխատենք այս նոր տարին ելի տոնածառ զարդարեն, բոլոր միջոցառումներին դաստիարակչական ասելիքը տեղ հասցել, որպեսզի միջոցառումն իր նպատակին հրաժարական լինի:

Ամենամեծ մաղթաքը այս է, որ մեր Արցախը հարաբերի, խաղաղություն լինի ու երեք չստեղծվի այնպիսի իրավիճակ, որ մտածնք Արցախը լրելու մասին: Ես ուզում եմ, որ հայ մտցի Արցախը լրելու մտանությունը դուրս գա: Մենք իրավունք չունենք այս հողը լրել, որովհետեւ բարի ուղղակի հմաստով այս թագաչի հողը

ողոված է արյունություն ու առաջարկություններից:

Մանկաթաղթի Միջնակարգ դպրոցի տևորեն Վահագիան Ավանեսյան



ողոված է արյունություն ու առաջարկություններից:

Չկամ միջնակարգ դպրոցի տևորեն Վահագիան Ավանեսյան

Տրամադրություն այս չէ, բայց երեխաներին մի քայլություն ու ուրախացնելու մասին:

Նեյու համար թեթեւ տոնական միջոցառում կկազմակերպենք:

Որոշ հոգեբանական ճշշում կա համայնքի, երեխաների վրա: Բայց հուսով ենք, որ սա ժամանակավոր բնույթ է կրենու:

Դուսանք, որ նախկին սահմանագիծը կիաստատվի ու առաջնագիծը նորից կանցնի թալիշի բարձունքներով:

Իսկ դրա համար յուրաքանչյուրս պետք է պայքարենք, չմտածենք, որ առանց մեզ այլ հարցը կլուծվի: Պատի մտածենք, որ մեզանից յուրաքանչյուրից է կայսված ապագան: պայքարենք, պահանջենք, որ հարց լուծումը լինի հօգուտ մեզ:



Թաղավարդի հիմնական դպրոցի տևորեն Մարգարիտա Սահակյան

Տրամադրությունը միշտ էլ մարտական էր: Բայց երբ դասարանները կահավորելու առաջարկ արեցինք, աշակերտների մի մասն ասաց, որ տրամադրությունը զարդարելու: Յիմա ավելի մեծ ուշադրությունը կատարում է:



Երեխաները տարբեր կազմակերպություններից, անհատներից, պետական կառույցներից նվերներ են ստանում: Բայց կնախընտրեին նախկին նվերները ու նախկին իրավակը լինենք:

Խաղաղությունը եմ մաղթում բոլորին. պատերազմ չի լինի, զիեր չտանք, մեր մայրերի, քույրերի աչքերը արցունք չտեսնեն:

Ճանկաթաղթի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Վիկեֆ Խաչատրյան



Գյուղի որոշ տներից 300-500 մետր հեռավորության վրա է գտնվում թշնամու դիրքը: Ժամանակ առ ժամանակ օր են կրակում: Բայց դա էլ հոգեբանութեն ազդում է: Յիմա պետք է հարմարվենք նոր իրավիճակին: Յուս ենք պահում, որ լավ կլինի: Ուրիշ գնալու մեջ ունենք տեղ չունենք: Եթե մենք այստեղ չընակվենք, թուրքն է ընակվելու:

Իսկ Նոր տարին ամեն տարվա նման ճնշ չենք նշելու, գյուղից վեց զի ենք ուսեցնել վերջին պատերազմի ժամանակ:

Հրուցեց Տաթեւիկ Աղաջանյանը

Ամանորյա Նվերներ՝ Արցախի սահմանամերձ գյուղերի 1200 երեխաների համար



Դեկտեմբերի 20-24-ը Յայ օգնության միության Կանադայի շրջանային վարչության հովանավորությամբ թշնամու անփառական նշանառության տակ գտնվող 19 գյուղերի երեխաներ ստացել են ամանորյա նվերներ, իսկ նրանց ընտանիքները՝ դրամական օժանդակություն:

Յայ օգնության միության Կանադայի շրջանային վարչության ատենապետության Անդի Օհանյանը, վարչության անդամ Սյուզի Պոյամյանն անձամբ են ներկա գտնվել նվերների հանձնմանը: Տրագի կազմակերպական հարցերը լուծվել են Յայ օգնության միության Արցախի միավորի միջոցով:

ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետության Լիլիթ Մարտիրոսյանը նշել է, որ ծրագիրն իրականացվել է Արցախի հսկողության տակ մասաց բոլոր շրջաններում: Մարտակերտի շրջանի Կիչան, Ճանկարաղ, Վարդանոր, Վարնկարաղ, Մադավուզ, Ասկերանի շրջանի Նախշեանիկ, Սառնադբյուր, Խորմոր, Մարտունու շրջանի Սաճկալաշեն, Թաղավարդ-Կալեր, Կարմիր Շուկա, Նորշեն, Ազդուռ, Սյուրիշեն, Յացի եւ Շուշի շրջանի Լիսագոր, Եղծահող, Յին շեն, Մեծ շեն գյուղերի 972 աշակերտներ եւ մանկապարտեզների սաներ ստացել են նվերներ:

«Յուրաքանչյուր տարիքային խմբի եւ սերի համար տարբեր նվերներ ենք նախատեսել՝ փափուկ խաղալիքներ, խաղալիք ավտոմեքենաներ, սպորտային հագուստ, ժամացույց, արձաթյա զարդեր», - նշել է Լ. Մարտիրոսյանը՝ պելացնելով, որ ծրագրում են մի քանի գյուղ եւս ընդգրկել: Այդ դեպքում ամանորյա նվերներ ստացող երեխաների թիվը կհասնի 1200-ի՝ ընդգրկելով Շոշ, Մշիթարաշեն եւ Յարավ գյուղերը: ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետությին շնորհակալությունը է հայտնել ԱՐ ԿԳՍՍ Նախարարությանը՝ համագործակցության եւ տրանսպորտային հարցերում աջակցելու համար:

ՀՕՄ-ի Կանադայի շրջանային վարչության ատենապետության Անդի Օհանյանը «Ապահով»-ի հետ գրուցում տեղեկացրել է, որ Արցախի մասնուկների ամանորյա նվերների գաղափարն առաջացել է նախորդ տարի՝ պատերազմի օրերին:

«Յայ օգնության միության Կանադայի շրջանը մտածեց որեւէ ծեւով օգտակար լինել տեղահանվածներին, Արցախի ժողովրդին: Մենք մասնակցել ենք տեղահանվածներին դրամական աջակցության տրամադրմանը: Իսկ երիտասարդները ցանկություն հայտնեցին ժամանակակից պարգևներ՝ Արցախի մասնուկներին: Մտա-

ծեցին՝ երեխաներին խաղալիքներ տալ, ծնողներին էլ՝ որոշ գումար Ամանորյա արիթմով որեւէ քան գնելու համար», - նշել է Անդի Օհանյանը:

Արցախ հանգանակություն արեցին եւ հավաքեցին մոտ 1500 երեխայի համար նախատեսված գումար: Անցյալ տարվա նոյեմբերի վերջին արդեն հանգանակություն ավարտվել էր, կորոնավիրուսային համավարակի եւ պատերազմի պատճառով միայն 270 նվերներ բաժանվեցին Երեւանում եւ սահմանամերձ շրջաններում ընակություն հաստատած տեղահանված ընտանիքների երեխաներին:

Երկրորդ փուլը սկսվեց 2021թ. դեկտեմբերի 12-16-ին, երբ Անդի Օհանյանը եւ Սյուզի Պոյամյանը Յայաստան մեկնեցին եւ Նոր տարվա առիթվ նվերներ բաժանեցին Ծենգավիթի ու մերձակա արվարձաններում հաստատված 100 ընտանիքների երեխաներին: Այսուհետեւ նվերներ ստացան Եղեգնաձորում եւ Սյուզի անդամնության հաստատված 100 ընտանիքների երեխաների:

Ծրագրի վերջին փուլը Արցախում իրագործվեց: Անդի Օհանյանը 5-րդ անգամ է այցելում Արցախ, բայց հասցեր էր լինել միայն Յարավուում, Շուշիում ու Ստեփանակերտում: Նրա խոսքով՝ մինչ

այդ ունեցած պատկերացումները տարբեր են: «Մեր արածը մի կաթիլ ջուր է օվկիանոսի մեջ: Երախի ավելի շատ գումարներ ունենայինք բոլորին հասնելու համար, որովհետեւ ամեն երեխայի ժամանական անգին է. մեծ գոհունակություն է այս օրերին երեխաների դեմքին ժախտ տեսնել», - ասել է նա:

Խոսելով Արցախի հետ կապած այլ ծրագրերի մասին՝ Անդի Օհանյանը ասել է, որ ՀՕՄ-ի Կանադայի միավորը ունի 10 մասնաճյուղ՝ եւ 1200 անդամ, եւ բոլոր պատրաստակամ, սիրով ընդուազում են ծրագրերին, մասավանդ՝ եթե հերթը հասնում է Արցախին:

«Մեր սրտում հատուկ տեղ ունի Արցախը: Մենք ամեն օր, ամեն ժամ ծեղ հետ միասին ապրում ենք բոլոր դժվարությունները: Մեր ժողովուրդը միշտ Արցախի կողքին է», - նշել է ատենապետությունը:

Կերպում Անդի Օհանյանը ուրախ ու խաղաղ Ամանոր է մաղթել Արցախին, որպեսզի բոլորն ապահով մթնոլորտում ապրեն: Իսկ իրենք այցից վերադառնալու են Նոր զաղափարներով, որոնք ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության հավանության արժանանալու դեպքում կիրագործեն:

Տաթեկի Աշաւանքներ



ՀՅԴ «Նոր սերունդ»-ը Արցախի մասնուկների համար



Սուրեն Աճեմյանը, ով իր ազգային, հեղափոխական եւ ժողովրդական երգերով երեխաների օրը խկական տոն դարձրեց:

Միջոցաւմն ընթացքում զմեր պայպ եւ Ջյունանուշը նվերներ բաժանեցին մասնակից երեխաներին:

Միջոցաւմն ելույթ ունեցավ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության ներկայացուցիչ Վահագն Խաչատրյանը, ով իր խոսքում շնորհակալություն հայտնեց ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միության եւ ՀՅԴ բոլոր շրջանների երգ-



թասարդական եւ ուսանողական միությունների նախաձեռնությամբ Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում կազմակերպվել է ամանորյա միջոցաւում՝ Արցախի 4 շրջանների ավելի քան 200 պատանիների համար:

Միջոցաւմն ներկա եր սիրահայ հայտնի երգիչ

տասարդական եւ ուսանողական միություններին, ովք բայց այս մեկ տարվա ընթացքում իրենց ներդրումն ունեցան արցախի փողքիներին երշանկացնելու գործում:

Նա նաեւ շնորհավորեց փողքիներին՝ Ամանորի եւ Սուրբ ծնունդի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղություն եւ միասնություն հայ ժողովողին:

ՀՅԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միության ներկայացուցիչ Սժբեկ Կարագավորյանը էլ իր խոսքում նշեց, որ Սփյուռքում բոլոր արցախի փողքիների կողքին են, որպեսզի վերջիններս մեկ վայրկան անգամ իրենց միայնակ ու անտեսված չգործած:

Վահագն Խաչատրյան

Արցախյան արտադրանքի ամանորյա տոնավաճառ

Ամանորյա տոնավաճառները աշխարհի շատ երկրներում ավանդույթ են դարձել. դրանցում ներկայացվում են հուշանվերներից ու ամանորյա պարագաներից՝ մինչեւ ուտելիքներ, որոնք համեմվում են երգ ու պարով, գեղեցիկ լուսերով եւ ապահովում տաք ու շերմ մթնոլորտ այցելուների համար:

Հետպատերազմյան Արցախում առաջին անգամ կազմակերպվեց ամանորյա ցուցահանդես-վաճառք, որի նախաձեռնությունը «Թումանյան արտ գինետուն»-ին է պատկանում: Ցուցահանդեսը կրում է «Պարագը Եկալ» խորագիրը, որին մասնակցում են արցախի շնորհաշատ երիտասարդ արտադրողները:

Նախագծի գաղափարի եւ ընթացքի մասին «Ապահոված»-ը գրուցել է Թրիստին Բայայակի հետ:

Թրիստին Բալյայանը 2018 թվականին հիմնադրել է «ՄիջաԳրի» բարեգործական հիմնադրամը, որն զբաղվում է Արցախում ներառականությամբ եւ հանրապետությունում առաջին ներառական մանկապարտեզներին ստեղծմամբ:

Հիմնադրմի ստեղծման գաղափարը ծնվել է 2016-ին՝ Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո:

Պատերազմից հետո Հայաստանում կազմակերպված գրեթե բոլոր ցուցահանդեսներին հիմնադրամը մասնակցություն է ունեցել:

«Մենք սկսեցինք մասնակցել այդ ցուցահանդեսներին եւ ներկայացնել արցախյան փախական, ժենայլով հացը՝ տեղում պատրաստվող: Տոյմայի 10-րդ փառատունին Արցախից առաջին անգամ են մասնակցություն ապահովեց մեր հիմնադրամը՝ արցախյան հումքով պատրաստված տոլմա նրկայացնելով:»

Այդ ցուցահանդեսներին մասնակցելով՝ մենք հասկացանք, որ մարդիկ ավելի հեշտ գումար են տալիս ուտելիք, քան ձեռագործ աշխատանք գնելու համար», - պատմում է Թրիստին Բալյայանը:

Մանկապարտեզ բացելու մտքից հիմնադրամը չի հրաժարվել, իսկ այս կյանքի կոչելու համար գումար էր անհրաժեշտ, ուստի հիմնադրամը որոշեց բացել «Թումանյան արտ գինետուն» ռեստորանը, որից ստացված ամբողջ հասույթը փոխանցվում է հիմնադրամին: Այս ռեստորանը նաև լավ վայր է ներառական հիմնադրություն առողջ երեխաներին մեկտեղ հավաքելու, նրանց համար հետաքրքիր ժամանակահանդիպելու համար: Օրինակ, Վերշերու նրանք հավաքել են միասին իրենց ձեռքով թիվածքաբարձր են պատրաստել:

«Ներառական հիմնադրություն պատրաստել պետք է շփվեն այլ երեխաների հետ, որպեսզի զարգանան: Նրանք փոքր ժամանակից պետք է շփվեն ինչու չունեցող երեխաների հետ, որպեսզի բոլորը հասկանան, որ ամեն տեսակի երեխա էլ ինում է, որովհետու մենք ամենք ել իրարից տարբեր ենք. սա պետք է ընդունենք եւ մեկն մյուսին օգնենք: Ես մասնակցել եմ տարբեր երկրներում կոնֆերանսների, եւ, տեսնելով օտարերկյա փորձը, կարող եմ ասել, որ մենք ել պետք է կիրառնը դա, որովհետու հասունացել է այլ պահը մեզ մոտ: Ինչքան շուտ սկսենք, այնքան ավելի շուտ կլուծվեն այլ ինչիները», - ասում է Թրիստին Բալյայանը:



Նրա խոսքով՝ ցուցահանդեսներ կազմակերպելն էլ է մտնում հիմնադրամի ծրագրերի մեջ: Մինչ պատերազմը կազմակերպել են նաև արտասահմանում:

«Քանի որ ամբողջ աշխարհում ամանորյա տոնավաճառներ են կազմակերպվում, իսկ մենք ել ունենք տաղանդավոր երիտասարդներ, բացօթյա մեծ տարածք, որոշեցինք, որ պետք է կազմակերպենք ամանորյա ցուցահանդես-վաճառք, որտեղ արտադրողները կարող են ցուցադրել եւ առաջարկել ապահոված արտադրությունը:»

Իրանքը: Ցուրտը չէր կարող խոչընդուռ հանդիսանալ, որովհետեւ տեղադրել էինք ինքնաւեր, վառել, հյուրախափություն կազմակերպելու ու մարդկանց հրավիրել, - նշում է նա:

«Ճիշտ է, պատերազմ է եղել, ու շատ ցավալի է այն, ինչ տեղի է ունեցել մեզ հետ, բայց այնպես է ստացվել, որ մեզ բախտ է վիճակի ողջ մասը ու շարունակել ապրել Արցախում: Արցախում ապահովությունը մեր կրում է մասնակի համար: Ես մտածեցի, որ այս իրավիճակում կարող եմ օգնել այդ երիտասարդներին, որպեսզի իրենքն մենք մենք ամսնորյա տոնավաճառներին:» - ասում է Թրիստին Բալյայանը:

Ըստ նրա՝ ցուցահանդեսը առաջին անգամ անգամ էր պատերազմից հետո կարելու չէ, որ այս իրեխական չէր, կարելու դեւույթ է, որ Արցախում տեղի է ունենում:

Ծրագրի հրականացման աջակցել է ԱՐ գյուղատնտեսության եւ էկոնոմիկայի նախարարությանը՝ տրամադրելով տաղավարները եւ ապահովելով տարածքի լուսավորությունը:

Արտադրողները եկան, իրենց տաղավարները կահավորեցին ու այդպես սկսեցին: Ամեն օր միջոցառությունը կազմակերպելով՝ փորձում էի մարդկանց հրազեկել եւ մեզ մոտ հրավիրել: Սա լավ առիթ էր նաև, որպեսզի արտադրողները ճանաչեն իրար, փորձեն համագործակցության եզրեր գտնել, ինչպես նաև հայտնի դառնալ հյուրերին, իրացնել իրենց արտադրանքը:

Ցուցահանդեսին ներկայացված էր վերջերս ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի եւ ՀՅԴ Արցախի երիտասարդական միունիքի անցկացված «Վերնը» բիզնես-ճամարակի արդյունքում հաղթող ճանաչված եւ որպես բիզնես նախագիծ կյանքի կոչված Արցախի անուշաբույր մոմերը, որը ներկայացրել է Տիրուհի Գասպարյանը: Ներկայացված էին նաև ճեռագործ զարդեր, կավից պատրաստված սպասք, գիպս արձանիկներ: Ծուշեցի Ոհիտան, ով կորցրել է ամեն ինչ, կրկին վերադարձել է Արցախ եւ շարունակում է այստեղ հաղայիններ պատրաստել: Ծուշեցի Այլոնա Մելքոնյանը ծեռագործ ժակետներ է պատրաստում: Ցուցահանդեսին ներկայացված են նաև «Դարաբարդ կարպետ»-ից սմուշներ, ինչպես նաև «ՄելաԳրի»-ի էկոնոմիկ Գասպարյանը: Ներկայացված էին նաև ճեռագործ զարդեր, կավից պատրաստված սպասք, գիպս արձանիկներ: Ծուշեցի Ոհիտան, ով կորցրել է ամեն ինչ, կրկին վերադարձել է Արցախ եւ շարունակում է այստեղ պատրաստել: Ծուշեցի Այլոնա Մելքոնյանը ծեռագործ ժակետներ է պատրաստում:

Թրիստին Բալյայանը ուրախությամբ է նշում, որ ընթացքում ստիլաված են սեղանները կիսել, որպեսզի տեղափորեն արտադրողներին:

Թրիստինը իր հորը կորցրել է պատերազմի ընթացքում՝ 1992-ի սեպտեմբերին:

«4 ամիս անց Նոր տարի եր: Յիմա ասում են՝ ինչպես կարելի է Նոր տարի նշել: Յիշում եմ՝ տատս ասում եր՝ երեխան չափությամբ կամ անորյա տոնավաճառը է անուշաբույր մոմերը:»

Երեխան չափությամբ կամ անորյա տոնավաճառը է անուշաբույր մոմերը: Երեխան պետք է իմասնա, որ թե կուզաքանություն է իրենց համար: Երեխան պետք է իմասնա, որ իր հայրը զոհվել է, որպեսզի ինքն ապրի:

Ինչպես, մենք շատ զոհ ենք ունեցել վերջին պատերազմում, ես չեմ կարող ասել՝ ինչ եմ զգում, բայց սա չափություն է ազդի երեխան պետք է իմասնա, որ իր հայրը զոհվել է, որպեսզի ինքն ապրի:

Ինչպես, մենք շատ զոհ ենք ունեցել վերջին պատերազմում, ես չեմ կարող ասել՝ ինչ եմ զգում, բայց սա չափություն է ազդի երեխան պետք է իմասնա, որ իր հայրը զոհվել է ու մենք պետք է արտես, որ մենք պետք է նրանց ուժ տանը: Մենք պետք է արտես, որ երեխանները պետք է ապրեն, ու մենք պետք է նրանց ուժ տանը: Դրա հետ մեկտեղ՝ պետք է պայքարենք, որ մեր երեխանները մեր երկրում ապրեն», - ասում է Թրիստին Բալյայանը:

Նրա խոսքով՝ պայքարել այս հոլի համար, բայց չնպաստել երիտասարդների զարգացմանը, առաջինացի առաջին անհատ է: Պետք է գործել կշռադատված ու ճշգրիտ քայլերով, պետք է կարողանալ ճիշտ գնահատել մեզ համար առաջնայինն ու երկրորդականը:

«Մեզ համար շատ նկատելի է արտասահմանի փոքր փոքրիկների տարրերությունը: Մեր փոքրիկները շատ ընկճական են, բայց միեւնույն ժամանակ շատ աղջական են արտասահմանի փոքրիկների համար, բայց որովհետու ապահոված արտադրողներին է մտցնում հասարակական կյանքում պատերազմից հետո:

Նրա խոսքով՝ պայքարել այս հոլի համար, բայց չնպաստել երիտասարդների զարգացմանը, անհամար անհամանում:

Ապահով է օգնենք նրանց հաղթահարելու այդ խոչընդուներն ու զարգացնել նրանց ընդունակությունները», - նշում է նա:

Օրիստին ասում է, որ բիզնեսն այսպես թե ինչքանով եւ, հարց է մեջ ինչքանով եւ ինչքանով ապահով է այս պատրաստությունը:

Բոլորը գնում են՝ բացի պատերազմից

Մի ժամանակ մանկությունս վագում էր Մարտունու վիզողոցներով, անցնում էր բոլոր թաղերով, կանչում ընկերներիս ու թափառում շենքից շենք, արեւից կողած աջերով նայում երկնքին ու արեւի մեջ երազանքներ գտնում:

- Չե՞ս հասնի, չե՞ս հասնի, ես ավելի լավ եմ վազում,-ասում էր:

- Կհասնեմ:

- Դե արի ու ինձ բռնիր, դե...

Մարտունի. արեւից վառվող, արեւի պես տաք վիզոցներ: Այս քաղաքում արեւը վաղուց է ապրում. Եկել, հավանել, հաստատվել է: Փողոցների արեւը հավաքելով՝ քայլում էնք ես ու հորեղայրու:

- Ամի՞ն, ինձ համար Ամանորին տիկինիկ կառնե՞ս, Ես աղջկ տիկինիկից, որ փրկարարի շորերով է:

- Չե՛, ուրիշ տիկինիկ կառնեմ, երբ փողս ստանամ:

- Բայց ես են աղջկ փրկարարն եմ ուզում:

- Ի՞.... աղջկ փրկարար չի լինում, սուտի-մուտի բաների հետեւից մի՛ ընկիր...

Յետո քայլում էնք դեպի տուն. Նա ոտքերի ցավից էր տառապում, ես՝ երազանքի: Երկու դեպքում էլ պետք է փողը ստանար, որ հարցերը լուծենք. Նրան դեղ կհասներ, ինչ ինձ՝ երազանք, ու հետո էլի կշրունակելով քայլել՝ նա իր ցավազրկած ոտքերով, Ես էլ՝ ցավից անտեղյակ իմ տիկինիկով...

Ծանոթ խանութից ցուցափեղին նկատել էի «փրկարար» տիկինիկին. Երեւի սպասում էր, որ գան իրեն առնեն: Ընկերութիւններ չուներ, մի հատ էր (ախր, որ արտադրել էին, չե՞ն մտածել, թե խանութից ցուցափեղին մենակ ինչ է անելու. ո՞վ գիտի, գուցէ ինքն էլ էր տիրում, որ մենակ է, այս էլ՝ փրկարարի շորերով):

Տարիներ հետո, երբ հիշում էի այդ տիկինիկին, մտածում էի՝ ինձանից լավ ո՞վ կհասկանար իրեն. Ես էլ քույր-եղբայր չունեի, եթե կուզեք, ճիշտն ասեմ, ընկերներ էլ չունեի, որովհետեւ չել ուզում ունենալ, որովհետեւ նրանք ամեն օր կանչում էին իրենց քույրերին, իրենց եղբայրներին, իրենց պապաներին, իրենց մամաներին: Ինչ ես միայն վերջինին կարող եմ կանչել:

Այդուհան իր հիշում էի, որ եր տիկինիկ իմը լիներ, որպեսզի փրկեր ինձ. չե՞ որ փրկարար է, ու անպայման չէ, որ հրեհից կամ ուրիշ նման բաներից փրկի, այնքան բան կա աշխարհում, որից արժե

Միայն մի հարց էր տանջում. Երբ ես ու տիկնիկը հանդիպեինց, պիտի ասեի.

- Այս երկրում, որտեղ որ քեզ ստեղծել են, պատերազմ կա՞, թե՞ մենակ իմ երկրում է:

Զգիտեմ, թե նա ինչ էր ասելու, բայց ես քթիս տակ փսփսում էի.

- Իմ երկրում իմաս տիկնիկի ստեղծելու ժամանակ չկա, ինչ որ երկրում կա, ուրեմն՝ քո երկրու պատերազմ չկա, երանի քեզ:

Տիկինիկ այդպես էլ չեր պատասխանելու, որովհետեւ պատերազմից ու իմ երկրից տեղեկություն չուներ, որովհետեւ նրան արտադրող չինացին նրա համար օրորոցային չեր երգել, չեր ասել, որ Սասունցի Դավիթը թուր Կեծակի ու Ջուլիկ Ջալալի ուներ, չեր պատմել, որ Նոյմ կանգնել է Արարատի գագաթին, շատ բան չեր ասել (իմ երկրու տարիներով ստեղծված միայն պաշտպանելու համար է, պաշտպանելու...):

Ամսվա վերջին երազանքը ավելի էր թունդ դառնում, որովհետեւ ամին վերջապես փող կստանար: Երազանքից բացի՝ թունդ էն դառնում նաեւ ամին ոտքերի ցավերը, որովհետեւ ցավազրկիչները վերջանում էին: Բայց ամին ամենալավ ամին էր, նա ցավերից չեր խոսում, միայն մի հարց էր տալիս.

- Աղջկ փրկարարին ի՞նչ ես անելու:

- Խաղալու եմ, համ ել ուզում եմ, որ նա ինձ փրկի:

- Ինչի՞ց, եթե ասես՝ ես կիրկեմ:

- Չե՛, դա մենակ ինքն է կարող, որովհետեւ իմ ներսում մի սենյակ եմ ազատել նրա համար, ուրիշ ոչ մեկին ներս չեմ թողնում, նրան եմ սպասում:

- Լավ՝ կառնեմ:

Վերջին բառն աշխարհի ամենալավ բառն էր դառնում, ու սպասում էի, որ «կառնեմ»-ը գա, տեղ հասնի, չնայած ո՞վ գիտե, գուցե նա պիտի գար ամին ցավազրկիչների հետ միասին, բայց միասին չտեղավորվեցին, ու ստիպված եղան միայն մեկին տեղավորվելու...

Ես ու փրկարարը հանդիպեցինք Նոր տարուն՝ 25 տարի առաջ.

- Բարեւ, փրկարա՛ր, -ասել էի:

- Բարեւ:

- Կարո՞ղ ես ենպես փրկեւ, որ երբ բոլորը կանչեն իրենց քույրերին, եղբայրներին, պապաներին, ես էլ կանչելու բան ունենամ, թե չե՞ եսպես մի տեսակ տիսուր է, թե չե՞ եսպես մի տեսակ մաման էլ է տիսուր. Ինձ թվում է՝ ինքն էլ է ուզում, որ այդ ամենից մենք ունենանաք:

Այսօրվա աես հիշում եմ դեմքը: Փրկարարը լուս էր:

- Իսկակա՞ն չես: Բա ինչո՞ւ ես փրկարարի շորեր հագել ու ծեռ բռնել խանութից ցուցափելիքին:

Չեր պատասխանել, մտածել էի՝ հաստատ իսկական չէ, կամ ել իսկական փրկարարներ չեն լինում:

Նում:

Չե՛, չի կարող պատահել, որ իսկական փրկարարներ չինեն, թե չե՞ ո՞վ կիրկի աշխարհը...

Ազգերս փակում եմ, որ նորից հիշեմ տիկնիկին ու նորից վագեմ: Ահա ես՝ տիկնիկին գրկած վագում եմ:

Ամին չի վագում, անկողնում պառկած է: Ես ու տիկ-

նիկն ենք վագում. մեզ բռնող չի կարող լինել, որովհետեւ մենք մեր խաղին ոչ մեկին չենք կանչել, որովհետեւ խաղի ժամանակ կարող է պատահի, որ մեկի քույրիկը, մեկի եղբայրը, մեկի պապան կանչի, ու նա զնա:



Ժամանակն ինձ հետ վագում է. բոլոր տիկնիկները, որ չեմ ունեցել, ինձ հետ վագում են, փողոցները վագում են, ամին ու ընկերներս վագում են, ամեն ինչ վագում է, մեկ էլ հանկարծ նկատում եմ, որ ճանապարհին սկսում եմ բոլորին մեկ-մեկ կորցնել: Միայն պատերազմն է մինչեւ վեր ինձ հետ վագում. բոլորը գնում են՝ բացի պատերազմից: Պատերազմը գնալու միտք չունի. Եթե անգամ ես կանգ առնեմ, նա, միեւնույն է, վագելու է առաջ, նա բոլոր ժամանակների ամենալավ վագորդն է, որին ոչ դեռ չի հաղթել...

Մարտունի: Այսօթ տարի հետո նորից արեւից այրվող փողոցների մասին պիտի գումա՞ն: Յա, արեւից, որովհետեւ հրթիռները արեւ չեն դառնա, հրթիռների փոխարեն ել արեւ կիսնի. կիսնի, չե՞ք հավատում: Ինչ դուք գոնե մեկ անգամ վագելու է բայց Մարտունու փողոցներով:

Ուզում եմ նորից գնալ խանութ, նորից գնել «փրկարարին», բայց ուզում եմ, որ նա այս անգամ իրական լինի, իսկական Փրկարար (տեսա՞՞ այս անգամ անուն մեծատառով գրեցի, որ հասկան՝ ինը հատուկ անուն է, ինքը կա, իրեն սպասող կա, հատկապես Նոր տարում, հատկապես պատերազմից հետո, հատկապես դրսում խաղացող այս երեխաները, որ չեն ուզում, որ իրենց մոտ «հայրիկ» կանչեն):

Ուզում եմ վերցնել աշխարհի ամենամեծ ցախավելն ու սրբել պատերազմի բոլոր բեկորները: Ես չեմ ամազում: Եթե այդպիսի ցախավել կա, տվեր ինձ. Ես ուզում եմ սրբել փողոցները, որովհետեւ աշխարհի ամենապատվարեր գործերից մեկը փողոց սրբելն է, քանի որ մաքուր փողոցներով բոլորը կարող են քայլել, ինչ կենսու փողոցները մարոկի շրջանում են: Չեմ ուզում շրջանցել ականերդ, ուզում եմ սրբել տանել, ուզում եմ փրկել այս բոլոր փողուներին, ուզում եմ փրկելու են քո փողոցներով ու տիկնիկներ են փողոցներում. պարտադիր չէ, որ նրանց տիկնիկները փրկարարի շորերով լինեն, միայն թե լինեն, միայն թե մանկությունը փրկելու կառու չլինի, միայն թե բոլոր մնան, գնացողը լինի...

**Հերմինե ԱՎԱԳՅԱՆԻ
«Իմ ու քո պատերազմ» օրագիր
Դեկտեմբեր 2020- դեկտեմբեր 2021**

Նոր տարվա եւ Սուրբ ծննդյան արձակուրդների պատճենով «Ապարաժ»-ի հաջորդ համարը լույս է տեսնելու 2022թ. հունվարի 31-ին: